ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԸ ԵՎ «ՕՂԱԿ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՐՍԵՂՅԱՆ Ի. Վ.

Թաթուլ Կրպեյանը, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի չորրորդ կուրսում ուսումը կիսատ թողնելով, օրինական փաստաթղթերով՝ որպես Գետաշեն գյուղի բնակիչ, տեղի դպրոցում ուսուցիչ աշխատելու համալսարանական գործուղումը ձեռքին, 1990 թ. սեպտեմբերին մեկնեց Գետաշեն: Իհարկե, թե՛ Հայաստանում և թե՛ Շահումյանում բոլորը տեղյակ էին, որ նա է Գետաշեն-Մարտունաշեն ենթաշրջանում ազերի օմօնականների անընդմեջ հարձակումների դեմ տեղի հայ բնակչության ինքնապաշտպանության համակարգող-պատասխանատուն:

Դեռևս 1991 թ. ամռանը Թ. Կրպեյանը մի քանի անգամ այցելել էր Լեռնային Ղարաբաղ, Շահումյանի շրջան՝ պատմամշակութային հուշարձաններն ուսումնասիրելու նպատակով, սակայն իրականում այդ այցելությունների նպատակն ավելի մոտիկից ծանոթանալն էր այն վայրերին, ուր պատրաստվում էր գործունեություն ծավալել:

Սեպտեմբերին Թաթուլի մարտական ջոկատը Երևանից մեկնեց Շահումյան, որտեղից տղաները ոտքով հասան Գյուլիստանի անտառներում տեղակայված ռազմական գաղտնի ճամբարը: Մի քանի օր այնտեղ մնալուց հետո Թաթուլը միայնակ հասավ Գետաշեն և աշխատանքի ընդունվեց տեղի ութնամյա և միջնակարգ դպրոցներում, որտեղ դասավանդում էր հայոց պատմություն և աշխարհագրություն: Շնորհիվ մարդկանց հետ հեշտությամբ լեզու գտնելու ունակության՝ նա կարողացավ կարճ ժամանակամիջոցում մտերմանալ գյուղացիների հետ, սկզբից ևեթ ամբողջ ջանքերն ուղղելով ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Ադրբեջանական ԽՍՀ Խանլարի շրջանի հայ բնակչության հիմնական մասը բռնագաղթեց 1988 թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 1989 թ. դեկտեմբեր - 1990 թ. հունվար ամիսներին: Շրջանի հարավի միայն երկու գյուղերում՝ Գետաշենում և Մարտունաշենում, հաջողվեց ինքնապաշտպանություն կազմակերպել: Ադրբեջանի կառավարությունն ամեն ինչ անում էր հայկական գյուղերի հայ բնակչությանը նույնպես տեղահանելու համար: Գետաշենն ու Մարտունաշենը շրջափակման օղակի մեջ էին՝ մեկուսացված Լեռնային Ղարաբաղի մյուս հայկական գյուղերից: Մինչև Գետաշենի և Մարտունաշենի 1991 թ. գարնանային զանգվածային բռնագաղթը Խանլարի և Շահումյանի շրջանների հայկական գյուղերն ամիսներ շարունակ ենթարկվում էին գնդակոծության:

Գյուղացիները վկայում են, որ Թաթուլը Գետաշեն եկավ, երբ բնակչության մի մասը լքել էր գյուղը, իսկ մեծ մասն էլ պատրաստվում էր հեռանալ: Ընդհանուր մտայնություն կար՝ միևնույն է, կստիպեն լքել գյուղը: Թաթուլը փորձում էր

բացատրական աշխատանքների միջոցով բնակչության մեջ արմատացած անվստահության զգացումը ցրել և վերականգնել խաթարված հավատը: Նա գործի մարդ էր ու սին քարոզներ չէր կարդում: Ուսանելի էր իր անձնական օրինակը՝ կիսատ թողեց ուսումը, բախտի քմահաճույքին մատնելով ընտանիքին, դեռ մեկ տարին չլրացած դստերը, հարազատներին՝ հասավ հեռավոր Գետաշեն: Նպատակը մեկն էր. ամեն ինչ անել, որ Գետաշենն ու Մարտունաշենը չարժանանան Կամո, Ազատ գյուղերի ճակատագրին և չհայաթափվեն: Անտեսելով թոքաբորբը՝ բարձր ջերմությամբ գիշերային հերթապահության էր կանգնում, արդարամիտ էր, անկաշառ, անսահման բարի, օգնում էր բոլորին, ինչով հնարավոր է: Այդ ամենով նա վարակեց մարդկանց: Աստիճանաբար փոխվեց նրանց հոգեբանությունն ու մտածելակերպը: Գյուղացիներն սկսեցին վստահել տղաներին և հավատալ, որ ինչ էլ պատահի՝ չեն մնա անպաշտպան ու անօգնական:

Շնորհիվ Թաթուլի գաղափարական-քաղաքական, քարոզչական գործունեության՝ գյուղի ինքնապաշտպանությունը դրվեց նոր մակարդակի վրա: Նա ստեղծեց կառավարման աստիճանակարգային ամուր համակարգ, մեծ աշխատանք տարավ պաշտպանական դիրքերի տեղաբաշխման ու աշխարհազորայինների ցուցակագրման հարցերում. ցուցակագրվեցին բոլոր զենք ունեցողները և նրանք, ովքեր ի վիճակի էին ժամապահ կանգնել: Աշխարհազորայիններին նույնպես սովորեցնում էր տարբեր ինքնապաշտպանական հնարքներ, արևելյան մարտարվեստի գաղտնիքներ, զենք կիրառելու հմտություններ, ժամապահ կանգնելու կարգ ու կանոն: Նրա հրահանգներով ու ցուցումներով կարճ ժամանակում ստեղծվեցին գյուղերի շուրջը անտառներով ու սարերի բարձունքներով ձգվող պաշտպանական դիրքեր, որոնցից յուրաքանչյուրն ուներ պատասխանատու հրամանատար և ազատամարտիկների որոշակի ցանկ: Հնարավորինս ամրացվեցին բոլոր «պոստերը» և առավել վտանգավոր ուղղությունները, մշակվեցին գործողությունների միասնական ծրագիր ու ռազմավարություն՝ տեղացի աշխարհազորայինների և Հայաստանից օգնության գնացած ջոկատների համար[1]: Այս ամենի շնորհիվ Գետաշենը դարձավ տարածաշրջանում ամենաուժեղ ամրակետը՝ ֆորպոստը, որը չեզոքացնելը դարձավ ԽՍՀՄ և ադրբեջանական իշխանությունների առաջնահերթ խնդիրը:

Թաթուլ Կրպեյանի՝ ինքնապաշտպանության կազմակերպմանն ուղղված գերմարդկային ճիգերի շնորհիվ գրեթե 9 ամիս ձգձգվեց Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի հայաթափման գործընթացը: Գետաշենցիներն իրենք են խոստովանում, որ եթե Թաթուլը չլիներ՝ գյուղերը կհայաթափվեին դեռևս սեպտեմբեր-հոկտեմբերին: Նա արգելում էր գաղտնի վաճառել տները, գույքը, տնային կենդանիներն ու տրանսպորտային միջոցներն ու լքել գյուղը: Մինչև վերջ մնալու և պայքարելու վճռականությունը շեշտելով՝ ասում էր. «Թուրքերը Գետաշենին տեր կդառնան միայն իմ դիակի

[1] **Կրպեյան Թ.,** *Գետաշենյան օրագիր, հեղինակի անձնական արխիվ:*

վրայով…»: Գետաշեն-Մարտունաշեն ենթաշրջանում այդ ընթացքում ընդմիջումներով գործել են նաև Հրազդանի «Ալաշկերտ» ջոկատը՝ Հրաչ Դանիելյանի («Զարգանդ») գլխավորությամբ, Վահան Զատիկյանի «Մալաթիա-Սեբաստիա» ջոկատը, «Արաբո» ջոկատը՝ Մանվել Եղիազարյանի և Սիմոն Աչիքգյոզանի («Դեդ») գլխավորությամբ: Բնակիչների վկայությամբ՝ միայն Թաթուլի մարտական ջոկատն էր, որ ոչ մի վայրկյան չբացակայեց տարածաշրջանից, ի տարբերություն մյուս ջոկատների, որոնք կարճ ժամանակով գալիս ու գնում էին: Բոլոր ջոկատները ենթարկվում էին Թ. Կրպեյանի հրահանգներին, առանց նրա իմացության որևէ կարևոր որոշում չէր կայացվում[2]: Խիստ կարգապահություն, հրահանգներին հետևելու պարտաճանաչություն և պատասխանատվություն, հրամանատարին աներկբայորեն ենթարկվելու պահանջ, հստակ զինվորական աստիճանակարգություն. ահա այսպիսին էր Թաթուլ Կրպեյան-հրամանատարի գործելակերպը: Եվ չնայած ռազմական գործում ցուցաբերած ծայրահեղ խստությանն ու պահանջկոտությանը՝ նա չափազանց բարի էր. գյուղացիները պաշտում էին նրան, մեծից փոքր սիրում ու հարգում էին: Նա բնակիչների հույսն ու ապավենն էր[3]:

Թաթուլը մեծ ուշադրություն էր դարձնում բնակչության շրջանում քրիստոնեական հավատքի վերարթնացման և ամրապնդման հարցին, որը պատերազմող ժողովրդի համար կենսական նշանակություն ուներ: Նրա անմիջական նախաձեռնությամբ սկսվեցին Գետաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու մաքրման, կառուցապատման և վերաբացման աշխատանքները: Ազատամարտիկ տղաներն ամենօրյա աշխատանք էին կատարում՝ դուրս հանելով եկեղեցում եղած հնոտիքը, քերելով պատերն ու հատակը, բարեկարգելով խորանն ու զավիթը, հետո զբաղվեցին բակի կանաչապատմամբ ու մի աղբյուր շինեցին այնտեղ: Երբ Հայաստան մեկնեց մի քանի օրով, Սբ. Էջմիածնի Մայր տաճարից գմբեթի համար խաչ և զանգ պատվիրեց, իսկ դպրոցում իր հիմնած ազգագրական երգի-պարի խմբի համար տարազներ հայթայթեց:

Գետաշենի ու Մարտունաշենի բնակչությունը 1990 թ. դեկտեմբերին հավաքվեց տասնամյակներ շարունակ մոռացության մատնված եկեղեցում: Եկեղեցու վերաբացման արարողությանը Թաթուլի հրավերով մասնակցում էր նաև Արցախի թեմի հոգևոր առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Սրբազանը մկրտեց Թաթուլին ու ազատամարտիկներին, ազգային տարազներ հագած դպրոցականներին: Տղաներն իրենց զենքերի ու վերածնված եկեղեցու Սուրբ խաչի վրա երդվեցին մինչև վերջ մնալ ու պայքարել Գետաշենի և Մարտունաշենի համար:

Լիակատար շրջափակման պայմաններում Կրպեյանը զբաղվում էր նաև գյուղերի տնտեսական զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, գյուղատնտեսական,

---

[2] Հեղինակի անձնական արխիվ, հրամաններ, հրահանգներ, տեղեկանքներ, ստացականներ, որոնք պահպանվում են Գետաշենից բերված թղթապանակում:

[3] Հեղինակի անձնական արխիվ, նամակներ, գրավոր և ձայնագրված հուշապատումներ:

սոցիալական, կենցաղային և այլ հարցերով: Ջոկատի ազատամարտիկները գիշերային պարտադիր հերթապահությունից հետո ցերեկներն օգնում էին գյուղացիներին՝ գործուն մասնակցություն ունենալով գյուղի հասարակական կյանքին և գյուղատնտեսական աշխատանքներին: Գետաշենում Թաթուլը կազմակերպեց գարնանացանը: Քանի որ հայ և ադրբեջանական գյուղերի միջև սահմանն անցնում էր ընդհանուր արտի միջով, ամբակետերում մարտական հերթապահություն իրականացնող տղաները հրաման ստացան հրամանատարից՝ չկրակել վարուցանք անող անզեն, խաղաղ ադրբեջանցիների վրա: Վերջիններս, գնահատելով նման վերաբերմունքը, նույնիսկ մի քանի անգամ վեճի բռնվեցին օմօնականների հետ: Նրանք պահանջում էին նույն կերպ վարվել արտում աշխատող հայերի հետ[4]:

Թաթուլ Կրպեյան-ռազմագետը այդ տարիների համար չլսված, յուրահատուկ վերաբերմունք էր ցուցաբերում նաև ադրբեջանցի գերիների հանդեպ: Նրա հրահանգներով ադրբեջանցի գերիները ստանում էին բժշկական օգնություն. գերին համարվում էր անձեռնմխելի մինչև նրա փոխանակման հարցը լուծվելը: Այս գործելակերպը նույնպես ուսուցողական էր դեռ նոր կազմավորվող և մարտական գործողությունների մեջ մտնող հայկական ֆիդայական ջոկատների մարտավարության ձևավորման գործում[5]:

Թ. Կրպեյանը ռազմավարական կարևոր քայլեր ձեռնարկեց ենթաշրջանի տարածքում հսկողություն իրականացնող խորհրդային զինվորականների հետ բարիդրացիական կապեր ստեղծելու ուղղությամբ, որպեսզի զենքի և զինամթերքի փոխադրումը կատարվի հնարավորինս անվտանգ ու առանց կորուստների[6]:

Գետաշենում Թաթուլի բնակարանը հիշեցնում էր բազմազբաղ, անդուլ մտավորականի կացարան. գրքեր, տետրեր, թղթեր էին սփռված մահճակալին, սեղանին, պատուհանագոգին, պահարանների դարակներին: Իրենից անբաժան էին նռնակը, «Մակարով» ատրճանակն ու գրքերը՝ Գարեգին Նժդեհի աշխատությունները, Ռուբենի հատորները, թուրքերենի դասագիրքը, բառարաններ, քարտեզներ, հայ ժողովրդի XIX-XX դդ. ազատագրական պայքարի մասին վերջին հրատարակությունները: Թաթուլ Կրպեյանի գետաշենյան օրագիրը լույս է սփռում 1990 թ. սեպտեմբեր - 1991 թ. մայիս ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների վրա: Ամեն էջում խոր մտահոգություն կա Գետաշենի և Մարտունաշենի ճակատագրի հանդեպ: Հատկապես տագնապալի են և անխուսափելի վտանգի կանխատեսումներ կան 1991 թ. փետրվար-ապրիլի գրառումներում. սթափ գնահատականներ, դեպքերի զարգացումներին վերաբերող հետևություն-եզրակացություններ, Լեռնապարի պատասխանատու մարմնի (ԼՊՄ) աշխատանքների մասին տվյալներ ու ոչ մի ամպագոռգոռ խոսք, ինքնագովության ոչ մի նշույլ[7]: Օրագրից տեղեկանում ենք, որ աշնան ամիսներին զինված թեթև բա-

---

[4] Հեղինակի անձնական արխիվ, Տ. Քոչարյանի պատմածից:

[5] **Գրիգորյան Գ.,** Անցյալ տարի ապրիլի 30-ին ընկավ Գետաշենը (Երկիր, 30.IV.1992):

[6] Հեղինակի անձնական արխիվ, օդաչուներ Գ. Գաբրիելյանի, Ռ. Մեհրաբյանի, Ստ. Նիկողոսյանի պատմածից:

[7] **Կրպեյան Թ.,** Գետաշենյան օրագիր, հեղինակի անձնական արխիվ:

խումներ, կրակոցներ, անասնագողություններ են կատարել ադրբեջանցիները, սակայն մինչև նոյեմբերի վերջ խոշոր միջադեպեր չեն եղել:

Ադրբեջանական օմոնը 1990 թ. նոյեմբերի 30-ին ծավալուն հարձակում գործեց Հյուսիսային Արցախի Գետաշեն, Մարտունաշեն և Մանաշիդ գյուղերի ուղղությամբ: Մոտ 200 օմոնականներից կազմված հրոսակները փորձեցին ներխուժել Մարտունաշեն: Թաթուլի հանձնարարությամբ հակատանկային ականներ տեղադրվեցին հարձակման հավանական ուղղությունների վրա, որոնք մարտի ժամանակ պայթեցին: Ինքնապաշտպանական ուժերը հետ մղեցին հարձակումը: Թշնամին, Մարտունաշենի պատերի տակ թողնելով ավելի քան 30 զոհ, փախուստի դիմեց: Այդ անհավասար մարտից հետո Թաթուլի հեղինակությունը կտրուկ բարձրացավ, իսկ նրա գլխի համար թուրքերի խոստացած գլխագինը կտրուկ մեծացավ: Թաթուլը գիտեր այդ մասին և ամեն անգամ հիշելիս կատակում էր[8]:

Ադրբեջանի ղեկավարությունը 1991 թ. հունվարի 15-ին որոշում ընդունեց ԼՂԻՄ-ին հարակից հայկական Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը միացնել ադրբեջանական Կասում-Իսմայիլովի շրջանին՝ ստեղծելով նոր Գերանբոյի շրջան՝ վերջնականապես վերացնելով Շահումյանի շրջան անվանումը: Դրան անմիջապես հաջորդեց ադրբեջանական օմոնի կուտակումը Գետաշենի և Մարտունաշենի սահմաններին, որոնք ներկայացրին գյուղերը դատարկելու մասին հերթական վերջնագիրը: Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի բնակչությունը չենթարկվեց այդ ապօրինի պահանջին և չհամաձայնեց միանալ Կասում-Իսմայիլովի շրջանին: Գետաշենցիները չկատարեցին ադրբեջանական իշխանությունների պահանջը գյուղն ազատելու և «իրենց համար հանրապետության սահմաններից դուրս բնակության վայր» փնտրելու վերաբերյալ: Իհարկե, այդ անհնազանդությունն էժան չնստեց հայ բնակչության վրա. ադրբեջանական իշխանությունները դադարեցրին սննդամթերքի, հացի, ալյուրի մատակարարումը, աշխատավարձերի վճարումը, շրջափակվեցին բոլոր ճանապարհները: Փետրվարի 25-ին անջատեցին էլեկտրականությունը, կտրեցին ջուրը, արգելեցին ռադիոհեռարձակումը: Միակ կապն արտաքին աշխարհի հետ ուղղաթիռային թռիչքներն էին, իսկ անվտանգության երաշխիքը՝ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումները, որոնք գյուղից դուրս բերվեցին ապրիլի 15-ին՝ ի չիք դարձնելով կայունությունը պահպանելու գյուղացիների վերջին հույսը: Երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհները ապաշրջափակելու փոխարեն Ադրբեջանի ղեկավարությունը, ապակողմնորոշելով հասարակական կարծիքը, հասավ այն բանին, որ արգելվեց ուղղաթիռների թռիչքը Գետաշեն, Շահումյանի շրջան և ԼՂԻՄ-ի հեռավոր շրջաններ[9]:

---

[8] *Հեղինակի անձնական արխիվ, Ա. Քալանթարյանի և Եղիշ դայու (Մարկոսյան) պատմածից:* **Խեչոյան Օ.,** *Հին հերոսները նրան ծնված օրից էին սպասում («Մենք, դուք, նրանք» երիտասարդական շաբաթաթերթ, N 8, սեպտեմբեր, 2006):*

[9] **Կրպեյան Թ.,** *Գետաշենյան օրագիր, հեղինակի անձնական արխիվ:*

1991 թ. գարնանն արդեն ոչինչ չէր կարող խանգարել ադրբեջանական ղեկավարության ու ԽՍՀՄ ՆԳՆ-ի և ՊԱԿ-ի համատեղ ուժերով կանխամտածված գործողությունների իրականացմանը, որի նպատակն էր արցախահայության բռնի տեղահանումը: Մի քանի անգամ ինքնապաշտպանական ուժերը հետ մղեցին ազերիների գրոհները: Ադրբեջանական օմօնականները, հակահարված ստանալով ազատամարտիկներից, հետ շպրտվեցին և այլևս չէին համարձակվում ինքնուրույն գործողություններ իրականացնել: Սցենարը նույնն էր. «անձնագրային ռեժիմի ստուգում« անցկացնելու պատրվակով առաջինը գյուղ էր մտնում խորհրդային բանակը, որին կրնկակոխ հետևում էր ադրբեջանական օմօնը:

Խորհրդային բանակի կարմիրբերետավորները 1991 թ. փետրվարին մոտեցան Մարտունաշենին ու հարձակվեցին գյուղի պաշտպանական դիրքերի վրա: Նրանք զինաթափեցին այդ պահին դիրքը պաշտպանող երկու տղաներին ու գերի վերցրեցին, որպեսզի հանձնեն օմօնականներին: Թաթուլը հասավ այն պահին, երբ կարմիրբերետավորները պատրաստվում էին հեռանալ՝ իրենց հետ տանելով հայ պատանդներին և նրանցից խլված զենքերը: Նա անհապաղ միջոցներ ձեռք առավ տղաներին ազատելու համար: Սթափ գնահատելով պահի լրջությունը և ստեղծված իրավիճակը, հասկանալով, որ մարտի մեջ մտնելն այդ պահին անմտություն կլինի՝ նա դիմեց չափազանց վտանգավոր և համարձակ քայլի. որոշեց բանակցել: Միայնակ, սպիտակ թաշկինակը վեր պարզած, նա հասավ բանակայինների դիրքերը: Մոտենալով զինվորականներին՝ արագ թևանցուկ արեց փոխգնդապետ Վալերի Կալիբերդենկոյին ու մի կողմ տանելով՝ սկսեց բացատրել նրան, որ զինվորները սխալմամբ են գերել երկու անմեղ տղաներին, որոնք բանակայինների համար որևէ վտանգ չեն ներկայացնում: Թաթուլը պահանջեց ազատ արձակել նրանց: Փոխգնդապետը հայտարարեց, որ նրանք անմեղ չեն, այլ վտանգավոր խռովարարներ են, և ադրբեջանական կողմը պահանջել է հանձնել իրենց: Թաթուլը փորձեց համոզել նրան, որ տղաներին չհանձնի օմօնականներին, որոնք ատելությամբ են լցված հայերի հանդեպ և խիստ հաշվեհարդար կտեսնեն նրանց հետ՝ ընդհուպ ողջ-ողջ այրելը: Կալիբերդենկոն կոպիտ պատասխանեց. «Դա նրանց գործն է»: «Սա էլ իմ գործն է» ասելով՝ Թաթուլը ակնթարթորեն բաճկոնի տակից հանեց իրենից անբաժան նռնակը, օղակազերծ արեց, իսկ մյուս ձեռքով անմիջապես բռնեց հրամանատարի օձիքից: Անակնկալից սարսափահար փոխգնդապետն ստիպված կատարեց Թաթուլի բոլոր պահանջները. հրամայեց ազատ արձակել պատանդներին, տրամադրեց երկու զրահամեքենա, որոնցից մեկում տեղավորվեցին տասներկու անզեն բանակային զինվորներ, իսկ երկրորդում՝ Թաթուլը, սպան և ազատված պատանդները: Վերջիններս Թաթուլի պահանջով մեկական ավտոմատ վերցրին: Գետաշեն հասնելուն պես Թաթուլը բաց թողեց զինվորականներին: Կալիբերդենկոն խնդրեց գոնե ավտոմատները վերադարձնել, բայց նա պատասխանեց.

«Կվերադարձնենք այն ժամանակ, երբ մեզ պետք չեն լինի»[10]: Դեսանտայինները իրենց հրամանատարի հետ հեռացան՝ խոստանալով հանգիստ թողնել հայերին:

Թ. Կրպեյանն առաջին անգամ այդ օրն իրականացրեց իր հանրահայտ հնարքը՝ օղակը քաշած նռնակով դուրս գալով բանակայինների դեմ: Լուրը կայծակնային արագությամբ հասավ խորհրդային և ադրբեջանական բարձրագույն հրամանատարական օղակներին, և դեպքից հետո երկու անգամ գյուղ եկան խորհրդային բանակի ստորաբաժանումները՝ Ադրբեջանի ՆԳ նախարարի տեղակալ Մամեդովի ուղեկցությամբ՝ պահանջելով հանձնել Թաթուլ Կրպեյանին, գյուղում եղած զենքը և գնդացիրը[11]:

Խորհրդային Միությունն ապրում էր քաղաքական, տնտեսական խոր ճգնաժամ: Մ. Գորբաչովը 1991 թ. մարտի 17-ին վերջին փորձը ձեռնարկեց փրկելու Խորհրդային Միությունը՝ անցկացնելով հանրաքվե: Բնակչության մոտ երեք քառորդը կողմ արտահայտվեց խորհրդային երկրի գոյությանը: Ադրբեջանը նույնպես կողմ արտահայտվեց, իսկ Հայաստանը հինգ այլ հանրապետությունների հետ՝ Վրաստան, Մոլդովա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, բոյկոտեց հանրաքվեն: Ադրբեջանական ԽՍՀ կազմում գտնվող ԼՂԻՄ-ին հարակից հայաբնակ շրջանները մնացին քննարկումից դուրս, որովհետև ԼՂԻՄ-ում որոշվեց հանրաքվեին մասնակցել 1988 թ. հուլիսի 12-ի որոշման հիմքով, ըստ որի ԼՂԻՄ-ը համարվում էր Ադրբեջանի կազմից դուրս[12]: Բաքվում ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների հավանությամբ և թողտվությամբ ծրագրվեց հայաթափել Գետաշենը և Մարտունաշենը: Ապրիլի 16-ին Բաքվում նախագահ Մութալիբովի մոտ տեղի ունեցած խորհրդակցությունում որոշվեց հայերի արտաքսմանը տալ իրավաբանական ձևակերպում՝ Գետաշենում և Մարտունաշենում իրականացնելով «անձնագրային ռեժիմի ստուգում»: Այդ օրը Մութալիբովը իրավապահ մարմիններին՝ ՊԱԿ-ին, ՆԳՆ-ին և դատախազությանը, կոչ արեց տեղահանել ԼՂԻՄ-ի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի բնակիչներին, եթե նրանք չենթարկվեն Ադրբեջանի Սահմանադրությանը: Համարյա նույնը նա կրկնեց ապրիլի 27-ին՝ հանդես գալով ադրբեջանական հեռուստատեսությամբ[13]:

Ադրբեջանական օմօնը, 1991 թ. մարտի 25-ից սկսած, հոգեբանական մշակման էր ենթարկում հայ բնակչությանը՝ պարբերաբար գնդակոծելով Գետաշենը և Մարտունաշենը (կային նաև զոհեր, որոնցից մեկը՝ 12 տարեկան տղա երեխա), սակայն դեռ չէր հանդիպում ձեռնարկել ավելի վճռական գործողություններ, քանի որ ինքնապաշտպանությունը բավական ամուր էր[14]: Մոսկվայի հետ համաձայնեցնելով՝

---

[10] Հեղինակի անձնական արխիվ, Ս. Թալայանի և Տ. Քոչարյանի պատմածից:

[11] **Գրիգորյան Գ.,** նշվ. աշխ.:

[12] **Հակոբյան Թ.,** Կանաչ ու սև, Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008, էջ 111:

[13] Московские новости,12.V.1991.

[14] Հեղինակի անձնական արխիվ, Լ. Ավագյանի, Ա. Նազարյանի պատմածից: Ադրբեջանական Սարիսու գյուղից արձակված հրազենային կրակահերթի հետևանքով Արամայիս Սահակյանի

1991 թ. ապրիլի 15-ին ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումները, որոնք իբր հաշտարարարի դեր էին կատարում հակամարտող կողմերի միջև, դուրս բերվեցին ենթաշրջանից: «Գետաշենի ենթաշրջանը չի մտնում ԼՂԻՄ-ի կազմի մեջ, հետևաբար այն չի մտնում հատուկ դրության շրջանի մեջ: Այդ իսկ պատճառով ապրիլի 15-ին ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերը այդտեղից դուրս հանվեցին[15]«,- հայտարարեց արտակարգ դրության շրջանի պարետության շտաբի պետ գնդապետ Վ. Լեբեդը: Իսկ ապրիլի 24-ին ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յազովի և ԽՍՀՄ ՆԳ նախարար Բ. Ժուգոյի հրամանով արգելվեցին ուղղաթիռների թռիչքները Գետաշեն ու Շահումյան:

Հակամարտող կողմերը ապրիլի 16-ին պայմանավորվեցին 3 օրով զինադադար հայտարարել: Դրա վերջնաժամկետը լրանում էր ապրիլի 19-ին՝ ժ. 24.00-ին, սակայն ապրիլի 19-ի ցերեկը, խախտելով զինադադարը, Կուշչի-Արմավիրից ազերիները ուժեղ հրաձգություն սկսեցին Գետաշենի և Մարտունաշենի ուղղությամբ: Հարձակմանը մասնակցում էին նաև խորհրդային զինվորականները: Մինչև հաջորդ օրը առավոտյան ժամը հինգը տևած հրաձգությունը լուսաբացին սաստկացավ Մարտունաշենի ուղղությամբ: Ազերիները գրավեցին «Սպիտակ տունը»[*] և ֆերմաները: Թաթուլը, իմանալով դեպքի մասին, անմիջապես միջոցներ ձեռնարկեց: Ականանետը վերցնելով՝ նրանք հասան դեպքի վայր: Անհրաժեշտ էր ականանետով հարվածել Կուշչի-Արմավիրի կրակակետին, որպեսզի բացահայտվեին հակառակորդի հետագա գործողություններն ու տեղաշարժերը: Մարտը տևեց մեկ ժամ, երկուստեք կային վիրավորներ. մեր կողմից՝ երկու վիրավոր, զինվորականներից՝ 3 զոհ և նույնքան էլ վիրավոր: Պաշտպաններին հաջողվեց հարձակումը հետ մղել՝ հրդեհելով մարտին մասնակցող հակառակորդի երկու զրահամեքենաներից մեկը: Հակառակորդը հետ քաշվեց «պոստերից»՝ զբաղվելով իր զոհերով և վիրավորներով:

Թաթուլը հանձնարարեց տեղանքին լավ ծանոթ մի քանի ֆիդայիների թշնամու խփված զրահամեքենան քաշել դեպի գյուղ, ոչընչացնել մեծ տրամաչափի գնդացիրը, ինչպես նաև պայթեցնել Մարտունաշեն և Կուշչի-Արմավիր գյուղերի արանքում գտնվող թուրքերի գրասենյակը՝ «Սպիտակ տունը», որի պայթեցումը խուճապահար արեց թուրքերին, և նրանք մեկ շաբաթով դադարեցրին հարձակումները[16]:

«Գետաշենի և Մարտունաշենի վրա հարձակումը պետք է տեղի ունենար ապրիլի 24-ին՝ հայոց ցեղասպանության նահատակների հիշատակի օրը: Ապրիլի 23-ին արդեն ռուսական բանակը ամբողջովին շրջապատել էր Գետաշենը և Մարտունա-

---

մահվան փաստը հաստատել է «Մեմորիալի» ներկայացուցիչ Վ. Պոպկովը, http://sumgait.info/ring/seda-vermisheva/karabakh-deportation-1.htm

[15] Հեղինակի անձնական արխիվ, Եղիշ դայու և Մ. Եղիազարյանի պատմածից:

[*] Մարտունաշենցիները «Սպիտակ տուն» էին անվանում գյուղի կոլտնտեսության գրասենյակը, որը ժամանակին ազերիները կարողացել էին գրավել, բայց մերոնց հաջողվել էր ձմռանը հետ նվաճել ու այնտեղ «պոստեր» տեղակայել:

[16] Հեղինակի անձնական արխիվ, Մ. Հարությունյանի և Տ. Քոչարյանի պատմածից:

շենը: Սակայն դեպի գյուղ շարժվող տանկային շարասյան առաջատար զրահամեքենան շուռ եկավ և գլորվեց ձորը, քանի որ համագյուղացիները սխալ ճանապարհ էին ցույց տվել, կային զոհեր: Բանակայինները զբաղվեցին զրահամեքենան ձորից քաշելհանելով, որի պատճառով հարձակումը հետաձգվեց: Կասկածները ցրելու համար ռուս հրամանատարները փորձում էին գյուղացիներին հանգստացնել՝ ասելով, որ սարսափելի ոչինչ չկա: Նույնիսկ միացրեցին էլեկտրականությունը: Երբ մերոնք կապվեցին Երևանի հետ, պատասխանեցին, որ մի վախեցեք, դա ուղղակի անձնագրային ռեժիմի ստուգում է»[17]:

Տխրահռչակ «Կոլցո» («Օղակ») գործողությունը անպարտելի Կարմիր բանակի 70-ամյա պատմության մեջ թերևս վերջին ռազմական գործողությունն էր: Բրիտանացի վերլուծաբան Թոմաս դե Վաալը դա համարում է «առաջին և վերջին խորհրդային քաղաքացիական փոքր պատերազմը, անհավասար պատերազմ՝ մի կողմից տեղաբնակ հայության ու նրան օգնության եկած կամավորների, մյուս կողմից՝ խորհրդային ստորաբաժանումների միջև, որոնց աջակցում էին ադրբեջանական ոստիկանական զինված ջոկատները»[18]:

Ապրիլի 28-ին գյուղի ղեկավարության հետ բանակցելու եկան երեք ռուս սպաներ: Որպեսզի անմեղ զոհեր չլինեն՝ նրանք առաջարկեցին առանց դիմադրության հանձնել գյուղը՝ ասելով, որ ադրբեջանցիները պատրաստ են վճարել հողի համար: Թաթուլը պատասխան ուղարկեց, որ հայրենի հողն առք ու վաճառքի ենթակա չէ: Գետաշենը հողի սովորական կտոր չէր նրա համար, ինչպես ինքն էր սիրում խորհրդանշական ձևով արտահայտվել. «Գետաշենը բանալին է, որով կբացվի Շահումյանի կողպեքը, այնուհետև Արցախի դարպասը, ու ազերիների հարձակումների ալիքը կհասնի մայր Հայաստանի սահմաններին»: Նա զգում էր մոտալուտ դժբախտությունը, սակայն Երևանից անընդհատ հանգստացնում էին՝ դիմացեք, ձեր թիկունքին կանգնած է ողջ Հայաստանը:

Խանլարի շրջանի Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի խաղաղ հայ ազգաբնակչության տեղահանության՝ Մոսկվայում նախօրոք մշակված ռազմական գործողությունը սկսվեց ապրիլի 29-ի լույս 30-ի գիշերը: Գործողությանը մասնակցող՝ Կիրովաբադում տեղակայված ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի Անդրկովկասյան օկրուգի 4-րդ բանակի, Բաքվի 23-րդ մոտոհրաձգային գնդի վարձկանները և ադրբեջանական օմօնականները Սարիսուի կողմից մոտեցող տանկերով, հետևակի ռազմական մեքենաներով և զրահամեքենաների շարասյուներով (ընդհանուր թվով 207 միավոր մարտական տեխնիկա, 6000 հոգի մարդուժ) աստիճանաբար շրջապատման օղակի մեջ են առնում Մարտունաշենն ու Գետաշենը:

«Կոլցո» գործողությունը սկսվեց ապրիլի 29-ի լույս 30-ի գիշերը Մարտունաշենի վրա լայնատարած հարձակումով՝ հայկական գյուղերի հայաթափության իրական

---

[17] **Կրպեյան Թ.,** *Գետաշենյան օրագիր, հեղինակի անձնական արխիվ:*

[18] **Tomas de Waal.** *Black Garden; Armenia and Azerbaijan through peace and war, New York and London, 2003, pp. 110-111.*

նպատակը քողարկելով «անձնագրային ռեժիմի ստուգում» և «պայքար ապօրինի զինված կազմավորումների կամ գրոհայինների դեմ» կեղծ ձևակերպումներով: Կրեմլի համար «Կոլցո» գործողությունը վերջին նախազգուշացումն էր Հայկական ԽՍՀ-ի հակակոմունիստական անջատողական իշխանություններին:

Զինվորական ստորաբաժանումները Գետաշեն մտան ապրիլի 30-ի լուսաբացին՝ ժամը 4.30-5.00-ին: Լայնածավալ գործողությանն առաջին անգամ օգտագործեցին խորհրդային բանակի ռազմական տեխնիկայի լավագույն տեսակները: Գյուղերը չորս կողմից գնդակոծվում էին հրանոթներից և խոշոր տրամաչափի գնդացիրներից: Ռադիոկապով և բարձրախոսներով պահանջում էին հանձնել զենքերը և չդիմադրել՝ սպառնալով, որ անգամ մեկ կրակոցը թանկ կնստի գյուղացիների վրա: Միևնույն ժամանակ դահիճները բացարձակ ազատ էին իրենց գործողություններում. նրանք սպանում էին, կացնահարում, մաշկազերծ անում, թալանում, հրդեհում, բռնաբարում, անդամահատում և այլն: Ստեղծված իրավիճակում Թաթուլը կատարեց միակ ճիշտ քայլը, որպեսզի փրկի գյուղացիների կյանքը: Նա արագ թռավ գյուղի կենտրոնով անցնող տանկի վրա, բացեց տանկի դռնակը, մյուս ձեռքով օղակը քաշած նռնակը ներս խցկելով՝ բղավեց. «Հանձնվեք, թե չէ միասին հօդս կցնդենք»: Կրպեյանը, օձիքից քարշ տալով, տանկից հանեց հրամանատարին, ադրբեջանցի ուղեկցորդին և հրամայեց տանկի մեջ գտնվող մնացած զինվորներին՝ 14 հոգու, զինաթափել ու թաքցնել: Ինքնապաշտպանները պատանդ զինվորականներին տեղավորեցին մոտակա տների նկուղներում[19]*:*

Զորքերի հրամանատար, ԼՂԻՄ-ի պարետի տեղակալ գնդապետ Մաշկովին խուզարկելիս և զինաթափելիս Թաթուլը հայտնաբերեց «Կոլցո» ռազմական գործողությանը մասնակից բանակի և օմօնի հրամանատարական անձնակազմերի, զինվորական և պաշտոնատար անձանց պայմանականչերի ծածկագիր-աղյուսակը, որը հետագայում հանձնվեց Հայաստանի Հանրապետության Նախագահին: Արդեն պարզ էր, որ կատարվածը ոչ թե «անձնագրային ռեժիմի ստուգում» էր, այլ նախապես հստակ ծրագրված և մանրամասն մշակված ռազմական գործողություն: Ըստ այդ փաստաթղթի՝ գործողությանը մասնակից բոլոր զինվորական ստորաբաժանումների հրամանատարներն ունեցել են համապատասխան ծածկագրված ազդանշաններ, օրինակ[20]*.*

գործողության ղեկավար …….....Յախտա
գնդապետ Մաշկով……Զալիվ
գնդապետՄիշին……Կուրգան
5478 զորամասի հրամանատար…….....ՎԻՐԱԺ

---

[19] *Հեղինակի անձնական արխիվ, Ս. Հակոբջոխվյանի և Վ. Հովհաննիսյանի պատմածից:*
[20] *Հայաստանի Հանրապետություն, 8. V. 1991:*

5477 զորամասի հրամանատար……...ՕԲՐԻՎ
1-ին վաշտ Զավիդսկի……...Վիրաժ-1
2-րդ վաշտ Ռյաբով.....Վիրաժ-2

«Հրամայի՛ր զորքը հեռանա գյուղի տարածքից,- պնդեց Թաթուլը,- հակառակ դեպքում կպայթեցնեմ ինձ ու քեզ: Բոլորիդ կսպանենք, եթե զորքը չհեռանա, ինչո՞ւ եք եկել»: Գնդապետը ռադիոկապով հրամայեց հետ քաշել զորքը և դադարեցնել գործողությունը: Սակայն դեպի գյուղի կենտրոն նորանոր վիրավորներ ու զոհվածներ էին բերում: Հասկանալի էր, որ ինչ-որ բան այնպես չէր: «Տեսնո՞ւմ ես, ձերոնք քեզ չեն լսում, ռադիոկապը չի աշխատում, գնանք, անձա՛մբ ասա, որ զորքը հետ քաշվի, և կրակը դադարեցնեն»: Թաթուլը որոշեց գնալ բանակցությունների՝ պատանդներին ազատելու և սպանդը դադարեցնելու նպատակով: Անձամբ համոզվելու համար, որ տանկերը դուրս են գալիս գյուղից, մի ձեռքով գնդապետի օձիքը պինդ սեղմած, մյուս ձեռքում՝ օղակը քաշած նռնակով, որն ամեն վայրկյան կարող էր պայթել՝ Մաշկովին անընդհատ նշանառության տակ պահելով, Հրաչ Դանիելյանի («Զարգանդ») ուղեկցությամբ նրանք շարժվեցին դեպի կրակի առաջին գիծը: Չնայած խիստ հրամանին՝ չգնալ իրենց հետևից, Թաթուլի տեղակալ Արթուր Կարապետյանը մի քանի քայլ հեռավորությունից, ավտոմատը ձեռքին, հետևեց նրանց: Մաշկովը, անդադար բղավելով, առջևում դիրքավորված զինվորականներին և օմօնականներին հրամայում էր չկրակել և տեղից չշարժվել: Գյուղի նեղլիկ փողոցներով անցնելիս նրանց դիմաց դուրս եկան տանկերը և օմօնականները, ինչ-որ մեկը հակառակորդի կողմից բղավեց. «Ձեր ուզած մարդը եկավ»: Նկատելով նշանառուին՝ Մաշկովը մի պահ գլուխը հետ գցեց, կարծես թե ուզում էր պարանոցի հոգնած մկանները շտկել, բայց այդ պահին նա անպաշտպան թողեց Թաթուլի գլուխը: Թիկունքից անմիջապես ճարճատեց ավտոմատի կրակահերթը, Թաթուլը ծնկեց, բայց հասցրեց ձեռքի նռնակն իրենից հեռու նետել: Հրամանատարին փրկելու փորձ անելով՝ Ա. Կարապետյանը և Հ. Դանիելյանը պատասխան կրակ բացեցին, բայց արդեն ուշ էր. նրանց վրա բոլոր կողմերից ավտոմատների կրակահերթեր տեղացին: Ականատեսների վկայությամբ՝ «Թաթուլը գիտակցաբար այդ պահին արեց միակ ճիշտ քայլը՝ իր կյանքի գնով կանխելով Գետաշենի կոտորածը: Չէ՞ որ ազերիներին ձեռնտու էր հրաձգություն սկսելը, ինչպես նաև ռուս սպայի մահը, այդ դեպքում նրանց ձեռքերը կազատվեին, և կարող էին կոտորածն ու տեղահանությունը ներկայացնել որպես «պայքար հայ գրոհայինների դեմ: Երբ Թաթուլը մահացու վիրավորված ընկավ, հասցրեց մտածել նաև այդ մասին ու ձեռքի նռնակը նետեց որքան հնարավոր է հեռու, զգալով գետաշենցիների հանդեպ պատասխանատվությունը, նա փրկեց Մաշկովին, որն ընդամենը թեթև վիրավորվեց նռնակի պայթյունից: Այս հերոսական քայլի շնորհիվ

բանակցությունները հետագայում շարունակվեցին, և հաջողվեց բնակչությանը տեղահանել առանց մեծ զոհերի»[21]:

Զինվորականներն ու օմոնականները ռադիոկապով անմիջապես իրար հաղորդեցին Թաթուլի մահվան լուրը. «Մորուքավոր ուսուցիչը սպանված է, վերջ»: Այս հերոսական արարքը ստիպեց ՆԳՆ բանակին և նրանց հետևող ադրբեջանական ուժերին դադարեցնել բռնությունները և ժամանակավորապես հեռանալ գյուղից: «Այսպես ավարտվեց պատմության մեջ չտեսնված, նախադեպը չունեցող մենամարտը աշխարհում ամենահզոր տերության ամենահզոր բանակի դեմ, և շնորհիվ աննախադեպ հերոսության՝ սպանդից փրկվեց շուրջ 3500 հայ»[22],- ուսումնասիրելով կատարվածը՝ հետագայում կվկայեն ռազմական և քաղաքական վերլուծաբանները:

Մայիսի 1-ին երևանյան բազմահազարանոց հանրահավաքում ՀՀ ԳԽ ներքին գործերի և պաշտպանության խորհրդի պաշտոնական հայտարարությունում ասվում էր. «Գետաշենի դեպքը առանձնահատուկ է նրանով, որ այստեղ հարձակումներին ադրբեջանական օմոնականների հետ առաջին անգամ բացահայտ մասնակցել է նաև խորհրդային բանակը: Այս հզոր ուժի դեմ ապրիլի 30-ին մղած անհավասար կռվում զոհվել են հայազգի քաջորդիներ: Ու չլիներ այդ արիասիրտ մարտիկների՝ Գետաշենի համար ցուցաբերած համառ դիմադրությունը, այսօր միութենական բարձրաստիճան պաշտոնյաները չէին փորձի բանակցության եզրեր որոնել Հայաստանի ՆԳ նախարարության և ՊԱԿ-ի ղեկավարության հետ»[23]:

Մայիսի 1-ին շրջապատման մեջ գտնվող Գետաշենում սկսվեցին բանակցությունները ինքնապաշտպանների և բանակի հրամանատարության միջև:

Կոտորածի հետևանքով Գետաշենում սպանվեցին 18, Մարտունաշենում՝ 7, վիրավորվեցին մի քանի տասնյակ մարդիկ, այդ թվում՝ երեխաներ: Թաթուլի պատանդ վերցրած 17 զինվորականներից 14-ին փոխանակեցին 29 հայ պատանդների հետ: 13 պատանդներ փոխանակվեցին ավելի ուշ, իսկ 11 հոգու ճակատագիրը մինչև օրս մնում է անհայտ: Մարտունաշենը հրդեհվեց ամբողջությամբ, իսկ Գետաշենում կրակի ճարակ դարձան գրեթե 1500 տներ:

Խանլարի շրջանի Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի խաղաղ հայ ազգաբնակչության բռնագաղթը սկսվեց մայիսի 2-ին և շարունակվեց մինչև մայիսի 7-ը: Տեղահանությունն ուղեկցվում էր քաղաքացիների գույքի և ունեցվածքի զանգվածային թալանով, ջարդերով, ձերբակալություններով, բռնությամբ և սպանություններով: Գետաշենի և Մարտունաշենի հայ բնակչության բռնագաղթի պետական բնույթի մասին վկայում են 1991 թ. մայիսի 1-ին գյուղերի վրա ուղղաթիռներից ցրած թռու-

---

[21] *Հեղինակի անձնական արխիվ, Վ. Հովհաննիսյանի պատմածից:*

[22] **Տեր-Թադևոսյան Ա.** *(Կոմանդոս), «Ժամանակի վկան» հաղորդաշար (Հանրային ռադիո, 30 ապրիլ, 2009):* **Նանանգուլյան Ս.,** *Արծիվները բարձունքներ են տենչում, Գիրք Բ, Ե., 1993, էջ 53-55:*

[23] *Հայաստանի Հանրապետություն, 1.V.1991:*

ցիկները, որոնց օրինակները պահպանվում են ՌԴ Պետական դումայի մարդու իրավունքների կոմիտեում[24]:

Մայիսի 8-ին ազերի բաշիբոզուկները և բանակայինները սկսեցին Գետաշենի թալանը: Հայ բնակչության ծայրահեղ դաժանությամբ ուղեկցված բռնագաղթի մանրամասները ուսումնասիրելով՝ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսի ղեկավարած պատվիրակությունը հետագայում «Կոլցո» գործողությունը որակեց որպես էթնիկ զտում[25]:

Մայիսի 2-ին զրահամեքենաներով Գետաշենից Շահումյան, իսկ այնտեղից ուղղաթիռով Երևան տեղափոխեցին 5 զոհված ազատամարտիկներին՝ Թաթուլ Կրպեյանին, Արթուր Կարապետյանին, Սիմոն Աչիքգյոզյանին, Հրաչ Դանիելյանին և Վալերի Նազարեթյանին:

Մայիսի 4-ին Հայաստանում համազգային սուգ հայտարարվեց[26]: Այդ օրը հայ ժողովուրդն իրոք բռունցքվել էր մեկ մարդու պես: Օպերայի շենքին հարող հրապարակում բազմահազար հայություն էր հավաքվել՝ հրաժեշտ տալու քաջորդիներին, որոնց պայքարը ոսկե տառերով կգրվի մեր ժողովրդի պատմության էջերում[27]:

1996 թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ Նախագահի հրամանագրով հայրենիքին մատուցած բացառիկ ծառայությունների համար ինքնապաշտպանության հրամանատար Թաթուլ Կրպեյանը հետմահու արժանացավ Հայաստանի ազգային հերոսի բարձրագույն կոչման և պարգևատրվեց Հայրենիքի շքանշանով[28]: Նրա անունով են կոչվում ՀՅԴ արտերկրյա մի քանի կազմակերպություններ, դպրոցներ Թաթուլ (Արեգ) գյուղում և Կովսական քաղաքում (ԼՂՀ Քաշաթաղի շրջան), փողոց Թալինում, լսարան ԵՊՀ պատմության ֆակուլտետում, որտեղ սահմանվել է Թաթուլ Կրպեյանի անվան կրթաթոշակ, իսկ լսարանում դրված է նրա կիսանդրին, դասարաններ՝ Երևանի «Մխիթար Գոշ» վարժարանում և Գյումրի քաղաքի Հովհ. Թումանյանի անվան թիվ 3 դպրոցում: 1993 թ. լույս է տեսել Թ. Կրպեյանի բանաստեղծությունների «Թաթուլ» գրքույկը: Հերոսի մարմինն ամփոփված է Թաթուլ գյուղում, որտեղ նրա շիրմի վրա կանգնեցված է տուֆակերտ հուշակոթող:

ТАТУЛ КРПЕЯН И ОПЕРАЦИЯ "КОЛЬЦО"

БАРСЕГЯН И. В.

Резюме

С сентября 1990 по май 1991 года Татул Крпеян возглавлял самооборону подрайона Геташен (Геташен-Мартунашен) Ханларского района от нападений незаконных азербайджанских воору-

---

[24] *http://www.iatp.am/hayknet/country/karabax/kar-dep3.htm*

[25] *Caroline Cox and John Eibner: Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh; Institute for Religious Minorities in the Islamic World; Zurich, London, Washington, 1993.*

[26] *Հայաստանի Հանրապետություն, 4.V.1991:*

[27] *Նույն տեղում, 2.V.1991:*

[28] *ՀՀ Նախագահի հրամանագիրը, ՆՀ-648, 20 սեպտեմբերի, Ե., 1996:*

женных формирований и подразделений, а также отрядов милиции особого назначения (ОМОН) МВД Азербайджанской ССР, которые были специально созданы осенью 1990 года и введены в НКАО и прилегающие районы.

30 апреля 1991 года, дабы остановить депортацию и резню армян, Татул Крпеян взял в заложники полковника Машкова –командира Бакинского полка Внутренних войск МВД СССР, организовавшего депортацию около трех с половиной тысяч армян – жителей сел Геташен и Мартунашен. Татулу Крпеяну удалось отобрать у Машкова памятку для офицеров и других должностных лиц с зашифрованными названиями всех участвующих в операции вооруженных подразделений. Операция была тщательно подготовлена и носила кодовое название ,,Кольцо". Этот беспрецедентный героический поступок вынудил руководство Советской армии и ОМОН временно приостановить военную операцию и вступить в переговоры. Во время переговоров Татул Крпеян погиб.

20 сентября 1996 г. приказом президента РА за заслуги перед Республикой Армения Татул Крпеян посмертно был удостоен высшего звания ,,Национальный герой Армении" и награжден Орденом Отечества.